ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐՈՀՈՂ ԿԱՌՈՒՑՆԵՐ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ

Ընդմիջարկություն *բառը նշանակում է* հավելում՝ ներմուծում գրվածքի՝ շարադրանքի մեջ, *իսկ* ընդմիջարկում՝ *ընդմիջարկելը, ընդմիջարկվելը*[1]*: Բանասերներն ընդմիջարկություն են համարում շարադրանքում կամ բնագրում հավելված ինչ-որ տեղեկություն, գուցե երկրորդաբար ասված միտք և այլն: Օրինակ, Ստ. Մալխասյանը Խորենացու պատմության մի «առեղծվածային տողը» (որպէս զԱ. առ Ք. եւ զԹ. առ Փ. եւ զԿ. առ Ե. եւ զՇ. առ Թ.) իր թարգմանության մեջ զետեղում է փակագծերում՝ համարելով* ընդմիջարկություն՝ *«որևէ հին ձեռագրի լուսանցքից մուծված բնագրի մեջ»*[2]*:*

Սույն ուսումնասիրությամբ քննության նյութ դարձնելով ընդմիջարկությունները՝ դրանք բնութագրում ենք ոչ թե որպես այս կամ այն երկում, բնագրում ներմուծված լեզվական արտահայտություններ, ինչպես վարվում են այլ հեղինակներ, թարգմանիչներ, այլ որպես շարահյուսական որոշակի կապակցություններում հանդիպող կառույցներ, *որոնց չձևավորված քերականական կապերի և տրոհման հատկանշով հանդես գալու պատճառով տրոհող կառույցներ ենք անվանում:*

Ընդմիջարկությունների քննությամբ զբաղվելու մեր հետաքրքրությունը ծագեց 2005 թ.՝ հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի նշման առիթով: Մեր ուշադրության կենտրոնը Կորյունի «Վարք Մաշտոցի» երկն էր. նրա թարգմանիչները, գրիչները, նրանից օգտվողները նշել են գրքի ոչ դյուրըմբռնելի ոճի, դժվար հասկանալի լեզվի մասին: Մ. Աբեղյանն ասում է. «Նրա գրածը հաճախ մութն է նաև անկանոն լեզվի պատճառով… Դժվար մատչելի է եղել այդ գրվածքը նաև միջին դարերում»[3]*:*

Այսպիսի կարծիքներից հետո հարց է ծագում. այդ ի՞նչ անհասկանալի և մութ տեղեր կամ անկանոնություններ են, որոնց մասին տարբեր առիթներով բանասերներն ու լեզվաբանները խոսում են և (ներողամտությամբ նկատենք) առանց մանրազնին մեկնաբանությունների ակամա փոխանցում իրենց հաջորդներին:

---

[1] *Տե՛ս Է դ. Ա ղ ա յ ա ն. Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-Զ, Երևան, 1976, էջ 402: Հմմտ. նաև Ռ. Ղ ա զ ա ր ե ա ն. Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, 2006, էջ 274 [Ընդմիջարկութիւն, գ. Խտրոց (մեջտեղը մի բան գցելը՝ ընկնելը)]:*

[2] *Տե՛ս Մ. Խ ո ր ե ն ա ց ի. Հայոց պատմություն, Երևան, 1981, ծանոթագրություն 7, էջ 458:*

[3] *Կ ո ր յ ո ւ ն. Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմ. Մ. Աբեղյանի, Երևան, 1979, էջ 15:*

Քննելով Կորյունի երկի լեզվական մի քանի առանձնահատկությունները[4] *՝ նկատեցինք, որ դրանցում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում* ընդմիջարկությունները, *որոնց կիրառություններով հեղինակի լեզվում «մութ և անհասկանալի» կառույցներ են ձևավորվում, ուստի բացահայտելով դրանք՝ դյուրըմբռնելի ու հասկանալի ենք դարձնում այդ «անհասկանալիները»:*

Ընդմիջարկությունները *բնութագրելիս նկատի ենք առնում երկու հանգամանք՝*

1. ինչպիսի՞ն են դրանք ներքին կառուցվածքով ու բովանդակությամբ,

2. ինչպիսի՞ կառույցներում են գործածվում, այսինքն՝ որպիսի՞ միավորների շրջանակներում են ընդմիջարկումներ կատարվում:

Ներքին կառուցվածքով՝ իրենց դրսևորումներով ու բովանդակությամբ, *ընդմիջարկություններն անսահմանափակ են և անմիօրինակ: Դրանք արտահայտվում են բառերով, բառակապակցություններով, նախադասություններով, որոնք կարող են գործածվել թե՛ առանձին և թե՛ խառը ձևով՝ հաջորդելով միմյանց: Ընդ որում՝ հանդիպում են անկապ կառույցներ, որոնք անբովանդակ են ու տարտամ, սակայն հանդիպում են նաև քերականական որոշակի հատկանիշներով կառույցներ:*

Օրինակ՝ Գիտէր *իսկ ոք* ոչ՝ *թէ բնաւ իցէ Աստուած (ՀՀ, 1, 668).* գիտէր *բայաձևը և* ոչ *ժխտականն ընդմիջարկվել են* իսկ ոք *անկապ կառույցով: Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն* ոչ *առանց յիշատակի բամբասանաց* թողուլ *(Խոր., 10). այստեղ նույն* ոչ *ժխտականը և* թողուլ *բայաձևն ընդմիջարկված են քերականորեն կապակցված կառույցով՝* առանց յիշատակի բամբասանաց:

Եւ վասն *առ ի Յունաց զրուցաբանսն զակնարկութիւն մերոյ պիտոյիցս* առնելոյ՝ *բաւական է այսչափ (նույն տեղում).* վասն *նախադրության և նրա* առնելոյ *խնդրի ընդմիջարկումով թվում է՝ նախադասության միտքը դժվարընկալելի է, իսկ ընդմիջարկվող միավորները ճիշտ որոշելու դեպքում դյուրին ընթացք է ունենում նախադասության կառուցվածքային բաղադրությունների տարբերակման խնդիրը. այսպես՝ ա) [վասն առնելոյ](զակնարկութիւն մերոյ պիտոյիցս (=մեր պետքերի ակնկալությունը՝ կարիքը բացատրելու համար), բ) [առ ի Յունաց զրուցաբանսն]→ զակնարկութիւն մերոյ պիտոյիցս (=հունաց պատմաբաններին [դիմելու] մեր կարիքը): Այսպիսով պարզվում է հետևյալ միտքը.* Եվ հունաց պատմագիրներին դիմելու մեր կարիքը բացատրելու համար այսքանը բավական է:

Ծավալուն ընդմիջարկությունները ներառում են դարձվածներ, նախադասություն կամ նախադասություններ, այլև բառեր ու նախադասություններ, այլևայլ կապակցություններ: Չափազանց բնորոշ օրինակ է Կորյունի հետևյալ նախադասությունը[5] *՝* Առն *զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արա-*

---

[4] *Տե՛ս* Է դ. Մ կ ր տ չ յ ա ն. *Կորյունի 88888Վարք Մաշտոցի» երկի լեզվական մի քանի առանձնահատկություններ.– 88888Հայագիտական հանդես» (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան), 2005, № 2, էջ 40-55: Նշված հոդվածում գործածել ենք ընդմիջարկումներ բառը, որի փոխարեն այստեղ ճիշտ ենք համարում* ընդմիջարկությունների *գործածությունը:*

[5] *Հմմտ. նույն տեղում, էջ 48:*

րեալ մեր պատմելոյ. էր Մաշտոց անուն *(Կոր., 9), որտեղ ծայրերում գործածված հատկացուցիչն ու հատկացյալը ընդմիջարկված են երկու նախադասությամբ [դրանցից մեկը դերբայական նախադասություն է (սեռական ենթակայով և անցյալ դերբայով)] ու բաղադրյալ ստորոգյալով: Եթե, այսպես ասած, կանոնավոր շարադասությամբ դարձնենք այն, թեև այդպես էլ ընդունելի է իբրև հեղինակի ոճի դրսևորում, կստանանք հետևյալը.* Առն անուն *էր Մաշտոց, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ (*=Մարդու անունը *Մաշտոց էր, որին հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու):*

Ընդմիջարկությունների կառուցվածքային ու բովանդակային բազմազանություններին կանդրադառնանք ստորև, իսկ այժմ պատասխանենք վերևում տրված երկրորդ հարցադրմանը, թե շարահյուսական ինչպիսի՞ կառույցներ կամ միավորներ են ընդմիջարկվում:

Ընդմիջարկվող շարահյուսական կառույցները (միավորները) նույնպես շատ են. այդպիսիք կարող են լինել ենթական և ստորոգյալը, որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչը և հատկացյալը, բացահայտիչն ու բացահայտյալը, բաղադրյալ ստորոգյալի մասերը, նախդիրը և նրա խնդիրը, նախադրությունն ու նրա խնդիրը, ստորոգյալը և նրա խնդիրը կամ պարագան: *Զնաբանական կառույցներից ընդմիջարկվում են* ժխտական մասնիկները և այն բայաձևերը, *որոնց վերաբերում են այդ մասնիկները: Հազվադեպ ընդմիջարկվում են* որոշ բարդ բառեր (հարադրական բարդություններ):

Եթե ընդմիջարկվող կառույցները և ընդմիջարկությունները կայուն ու փոփոխական լինելու հատկանշով համեմատենք, անմիջապես կնկատենք դրանց հակադիր պատկերները. որքան քերականական կայուն միավորներ են ընդմիջարկվող կառույցները, նույնքան փոփոխական են ընդմիջարկությունները: Դա նշանակում է, որ օրինակ, որոշիչ-որոշյալ կապակցությունը կարող է ունենալ տասնյակ, հարյուրավոր տարատեսակ ընդմիջարկություններ, որոնք, մեր կարծիքով, այլ բան չեն, քան հեղինակային ոճի դրսևորումներ[6]:

Գրաբարի ձեռնարկներում, դասագրքերում տրված ծանոթագրություններում լրացական որոշ կապակցությունների վերաբերյալ ընդհանուր բնույթի դիտարկումներ են անում՝ նշելով, որ «լրացում և լրացյալ հանդիսացող բառերը միմյանցից անջատվում են» ինչ-որ բայաձևերով, օրինակ՝ վասն նոցա կշտամբութեան յարմարել *զբանս. բոց* ունէր *մօրուս (որոշիչը և որոշյալը բաժանված են ստորոգյալով). զիւրեանցն* հաստատեալ կարգեցին *զժամանակս (փոխ.* «Հաստատեալ կարգեցին զիւրեանցն ժամանակս»: *Հատկացուցիչը և հատկացյալը բաժանված են ստորոգյալով)[7]: Մեր ուսումնասիրությամբ ցույց ենք տալիս, որ վերոհիշյալ շարահյուսական կառույցները միայն բայաձևերով չեն ընդմիջարկվում. դրանք կա-*

---

[6] *Բերվող օրինակներում ընդգծում ենք միայն ընդմիջարկվող միավորները, որից կհասկացվի, թե որոնք են ընդմիջարկությունները:*

[7] *Հմմտ.* Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 396, 421 և այլուր:* Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն. *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1986, էջ 264:*

րող են ընդմիջարկվել նաև այլ բառաձևերով, կապակցություններով ու նախադասություններով:

Այժմ ըստ շարահյուսական ու ձևաբանական կառույցների ներկայացնենք գրաբարում հանդիպող ընդմիջարկությունները:

1. ՈՐՈՇԻՉ ԵՎ ՈՐՈՇՅԱԼ: *Գրաբարում որոշչի նախադաս և հետադաս կիրառությունները սովորական և տարածված երևույթ են: Սակայն նկատելի է, որ ընդմիջարկումների դեպքում առավելապես հաճախական գործածություն ունեն նախադաս որոշչային կառույցները:*

Օրինակ ՝ 1. *Ապա ուրեմն յայտ է, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, եւ* բարձրագունից *արժանաւոր* գովութեանց, *եւ* յայսպիսի պատկանաւոր *դնիլ* յարձանագրութիւնս *բանից (Խոր., 6):* 2. *Մեք յընթեռնուլն զառ ի նոցանէ շարածս բանից՝ ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք, եւ* քաղաքական *ուսանել* կարգս *(Խոր., 10):* 3. *Ըստ նոցանէ եւ պարապեալքն այսպիսում ճգնութեան դիւանագիրք մատենից՝* ներբողականաց *ի մէնջ արժանի եղեն* ասից *(Խոր., 10):* 4. *Տայ եւ առնն քաջի եւ պատուականի Արգամայ զխոստացեալ գահն երկրորդական…* տարգալ *ունել* ոսկի *եւ* պատառաքաղ, *եւ* ոսկեղինօք *ըմպել* նուագօք *(Խոր., 206):* 5. *Փոխէ զարքունիսն յարեւմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ* Ախուրեան *հոսի* գետ *(Խոր., 194):* 6. *Հասանէ վախճան Արտաշիսի… եւ առաջի* պղնձիս *հարկանելով* փողս, *եւ զկնի կուսանք ձայնարկուք սեւազգեստք եւ աշխարող կանայք (Խոր., 228, 230):* 7. *Զայս եւ* զայսպիսի, *եւ որ ինչ այս բանից նման են* բանք, *խօսեցաւ (Բուզ., 392):* 8. *Այրս այս Խաղ* բուն *էր սա* ի Կարին գաւառէ, *ի գեղջէ Մարագայ (Բուզ., 166):* 9. *Եւ ո՞ւր էր զի երկոքին ուրախ լինէին ի նմա՝ որ* հակառակ *միմեանց տային* զպատուէրս *(Եզն., 208):* 10. *Որոց նմայն* զայն *շնորհեալ էր* գեղեցկութիւն *(Ագաթ., 118)=Որոնք նրան շնորհել էին այն գեղեցկությունը:* 11. *Քանզի հայեցեալ ի* կամաւոր *նոցա յաղագս յաւիտենից յուսոյն զանազան* տանջանացն *մասունս (ՂՓ, 260):* 12. *Պարտ էր մեզ* հրաշափառագունիւ *անցանել* բանիւ *(ՀՀ, 7(1), 551):*

Ինչպես նկատելի է, միայն մեկ օրինակում է (4) որոշիչը նախադաս, իսկ ընդմիջարկությունները տարբեր արտահայտություններ ունեն, որոնցում բառական ընդմիջարկություններից իշխող են բայաձևերով արտահայտվածները, կապակցական կառույցները տարատեսակ են (նախադասություններ են, նախադասության մասեր և այլ կառույցներ):

2. ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՀԱՏԿԱՑՅԱԼ: *Հատկացուցիչ-հատկացյալի կապակցություններում հատկացուցիչը ևս նախադաս ու հետադաս կիրառություններ ունի: Ընդ որում, սրանց շարահյուսական կառույցներում նույնպես ընդմիջարկություններն առավելապես հանդիպում են հատկացուցչի նախադաս կիրառության կառույցներում:*

Օրինակ ՝ 1. *Որք գրով եւ պատմութեամբ* զիւրեանցն *հաստատեալ կարգեցին* զժամանակս *(Խոր., 10):* 2. *Գիր Պարսից եւ Յունաց, որովք այժմ զիւղից եւ գաւառաց, եւս եւ իւրաքանչիւր տանց* առանձնականութեանց, *եւ հանուրց* հակառակութեանց *եւ* դաշանց *այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց* մատեանք *(Խոր., 12):* 3.

Բայց սակայն սկսայց, թէպէտ եւ ջանիւ. միայն թէ շնորհակալ ոք մերոցս *գտանիցի* աշխատութեանցս *(Խոր., 14):* 4. *Դարձեալ* բախտաւորութեանց *եւ* չուառութեանց՝ *զաստեղսն դնեն* պատճառս *(Եզն., 126):* 5. *Ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ [նա]* ոյր ուրուք *եւ դիպէր* ծնունդն *մտանելոյ առիւծուն յաստեղատունն (Եզն., 130):* 6. *Եւ ո՞ւր իցէ այն, զոր ասենն, եթէ որ ինչ* ի ճակատագրին *գրեալ է* հրամանացն, *այնմ չէ հնար վրիպել (նույն տեղում):* 7. *Քանզի հայեցեալ ի կամաւոր* նոցա *յաղագս յաւիտենից յուսոյն զանազան* տանջանացն *մասունս (ՂՓ, 260):* 8. *Նոյնպէս եւ կանայք,* որոց *նահատակեալ մարտիրոսացան* արքն *(ՂՓ, 262):* 9. Զորոց *եւ մարգարէին իսկ գովեալ* զիմաստութիւնն, *ասէր ցոմն այսպէս (Կոր., 4):* 10. *Եւ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն, զամենայն* գործակցաց *իւրեանց գրով նշանակել* զքաջութիւնս *(Կոր., 6):*

Լրացական կապակցություններում ընդմիջարկվող լրացյալը եթե նախդրավոր բառ է, ապա նախդիրը կրկնվում է՝ դրվելով նաև լրացման վրա, ինչպես վերջին օրինակներում (9 և 10). զ *նախդիրը կրկնվել է՝* զ*որոց* զ*իմաստութիւնն.* զ*ամենայն գործակցաց* զ*քաջութիւնս (այստեղ* զ*-ն անցել է որոշիչ լրացման վրա):*

3. ԲԱՑԱՀԱՅՏԻՉ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼ: *Բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունը կայուն շարադասություն ունի բուն բացահայտչի կառույցներում. բացահայտիչը միայն հետադաս է գործածվում: Այդպիսի կառույցներում ընդմիջարկություններ են ձևավորվում բացահայտյալի հետադաս և բացահայտչի նախադաս լրացումների, բառերի ու կապակցությունների միջոցով:*

Օրինակ՝ 1. *Կոչէ առ ինքն զՎասակ, եւ* որք *ընդ նմա* իշխանքն *ամենեքեան (Եղ., 192):* 2. *Բայց* զդուստր *իւր* զԱրտաշամայ *տայ կին* Միհրդատայ *ումեմն Վրաց* բդեշխի *մեծի, որ էր ի զաւակաց* Միհրդատայ, *Դարեհի* նախարարի *(Խոր., 138):* 3. *Իսկ* զԱնոյշ, *զառաջին* կինն *Աժդահակայ, եւ* բազումս *ի սերմանէ Աժդահակայ* աղջկունս… *բնակեցուցանէ յարեւելեայ ուսոյ մեծի լերինն մինչեւ ի սահմանս Գողթան (Խոր., 98):* 4. *Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ* ծնունդս *նորոգ եւ սքանչելի սուրբ աջովն իւրով,* նշանագիրս *հայերէն լեզուին (Կոր., 14):* 5. *Ասէ ցնա* մի *յաշակերտացն նորա,* Անդրէաս, *եղբայր Սիմովնի Վիմի (Յովհ., Զ, 8):*

Բացահայտչի մյուս տեսակները ևս կարող են ընդմիջարկվել բացահայտյալներից, ինչպես՝ Վասն մտելոց անուանց *եւ գործոց նոցա ի քարտէս արքունի,* իբրեւ գործակալաց *եւ* վերակացուաց *աշխարհիս ի նոցանէ կացելոց եւ մեծաց* կողմնակալաց *(Խոր., 78):* 6. *Տայ* նմա *ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, եւ զգաւառն Շիրակ,* որպէս ազգականի *իւրում եւ մտերիմ* հարազատի *(Խոր., 294):* 7. *Փոխէ զարքունիսն* յարեւմուտս կոյս, ի *քարակտուր մի* բլուր *(Խոր., 194):* 8. Որպէս զանասունս *ի մէջ օդոյ՝* որք *ի նմա են եւ զատուցեալք ի նմանէ (ՀՀ, 1, 703):* 9. *Եւ ճամբարն Երուանդայ էր բացագոյն* ի քաղաքէ *նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ* ի հիւսիսոյ, ի վերայ գետոյն *Ախուրեան (Խոր., 202): Այս վերջին օրինակներում ընդմիջարկված են մասնական (6,8) և մասնավորող պարագայական (7, 9) բացահայտիչներն իրենց բացահայտյալներից:*

4. ԵՆԹԱԿԱ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼ: *Ենթական և ստորոգյալը շարադասությամբ ազատ գործածություն ունեն և, բացի միմյանց հաջորդելուց, կարող են նաև իրարից հեռանալ բառերով, կապակցություններով, միջանկյալ, երկրորդական նախադասություններով և այլն: Այստեղ խոսքը քերականական-հաղորդակցական օրինաչափություններով հեռացումների մասին չէ, այլ բուն ընդմիջարկություններով տրոհվել-հեռանալու մասին է:*

Օրինակ ՝ 1. Դո՛ւ, *որ յառաջ զանաւրէնութիւնսն գործէին հսկայս* ՝ *որ յանձանց զաւրութիւն եւ քաջութիւն յուսացեալ էին* ՝ ջնջեցեր, ածե՛ր *ի վերայ նոցա զանչա՛փ ջուրցն սաստկութիւն (Գ Մակ., Բ, 2):* 2. Դո՛ւ, *որ գործէին զամբարտաւանութիւն զսողոմացիսն, յա՛յտ յանդիմանութեամբ չարեալքն իւրեանց հանդերձ* ՝ խայտառակեցեր, *ի հուր եւ ի ծծումբ* դատեցեր, *եւ առակ խայտառակութեան յետնոց թողեալ (Գ Մակ., Բ, 3): Երկու օրինակներում էլ* դու-*ով արտահայտված ենթակաները համապատասխան ստորոգյալներից* ՝ ջնջեցեր, ածեր *և* խայտառակեցեր, դատեցեր, *բացահայտորեն ընդմիջարկված են ուղիղ խնդիրներին վերաբերող որոշիչ երկրորդական նախադասություններով* (ո՞ր հսկաներին *և* ո՞ր սողոմացիներին), *2-րդ օրինակում* ՝ *նաև բառակապակցությամբ (յա՛յտ… հանդերձ):* 3. *Քարանձաւ կանգուն անշեղ. եւ ի սմանէ զհարաւով բացագոյն հովիտ իմն դաշտաձեւ. ընդարձակ եւ գեղեցիկ ձորաձեւ, որոյ ընդ մէջն* հոսանք *ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծործորոց եւ հովտաց քամեալք, եւ ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք ի ծաւալումն գետոց* պերճանային *(Խոր., 64):* 4. *Զի որ ոք ուրուք պատճառ ծննդեան կարիցէ լինել,* նա *ի վեր քան զնա* ՝ *որոյ պատճառն է* ՝ պարտի լինել *իմաստութեամբ (Եզն., 126): Կորյունի երկի մի նախադասության մեջ (էջ 38) սեռական հոլովով ենթական* ՝ պաշտօնէիցն *[…զոր եւ* առեալ*… ձեռնասուն աստուածասէր* պաշտօնէիցն *իւրեանց] դիմավոր ստորոգյալից* ՝ հասուցանէին *[…ի Տարօն* հասուցանէին*] ընդմիջարկված է 6-7 նախադասություններով ու կապակցություններով:*

5. ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՄԱՍԵՐ ԿԱՄ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ: *Այդպիսիք կարող են լինել ստորոգելին (ստորոգելիական վերադիրը) և հանգույցը կամ վերացական բայը, այլն միադիմի, եղանակիչ, էական բայերը ու անորոշ դերբայը և այլն, որոնք որպես զույգ միավորներ ընդմիջարկվում են տարատեսակ բառերով ու կապակցություններով:*

Օրինակ ՝ 1. Կամիմ *զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն* ոչ *առանց յիշատակի բամբասանաց* թողուլ *(Խոր., 10):* 2. *Զի թէ արդարեւ* արժանի *գովութեան այնք ի թագաւորաց* իցեն *(Խոր., 10):* 3. *Եւ* չկարացեալ *Վահանայ եւ մարդկան, որ միաբանեցան ընդ նմա,* տանել *արհամարհանաց (ՂՓ, 388).* չկարացեալ *դերբայ-ստորոգյալ+անորոշ դերբայ> բաղադրյալ ստորոգյալ:* 4. *Եղեալ մեզ մահ առաջի* ՝ *պատրաստ եմք մեռանել, այլ* ծառայութիւն առնել *Արեաց տեառն* չկարեմք *(ՂՓ, 392):* 5. Խրատել *եւ* հրահանգել *ըստ իւրեանց իմաստութեան եւ արուեստի* ջանային *(ՂՓ, 270):* 6. Ոչ իշխէ *արքայից արքայի ծառայ* ՝ *ի կայսր* խրախուսել *(ՀՀ, 1, 668):* 7. *Իսկ դորին խրատդ անշնորհ* առնել *զդիսն* իշխեաց *(Ագաթ., 118):*

Միադիմի բայ + անորոշ դերբայ *կառույցով* ՝ 8. Պարտ է *մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օդոց եւ մաքրութեան ջուրց եւ երկրի, քաղաք եւ արքունիք* շի-

նել *բնակութեան (Խոր., 62):* 9. Պարտ է *մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախոսութեանն* գրել *(ՀՀ, 7(1), 551):* 10. *Յաղագս արմատոյն հանուր մարդկութեանս, կամ թէ* հաճոյ *ումեք* թուիցի ասել *ծայրին,* պարտ էր *մեզ սակաւ ինչ* անցանել *բանիւ (Խոր., 14):* 11. *Զի՞նչ* պիտոյ էր *նմա բարսմունս* ունել *եւ* յաշտ առնել *(Եզն., 110):* 12. *Զի* ոչ *արդարոյ, որ բնութեամբ արդար իցէ,* մարթի *զչար ինչ պատուէր* տալ *(Եզն., 208):*

Էր + գոյական կամ անորոշ դերբայ *կառույցով* ՝ 13. Էր *արդարեւ տղայն կայտառ եւ հզօր* մարմնով *(ՀՀ, 7(1), 529):* 14. Էր *արդարեւ սաստիկ* հզօր *եւ այսպիսեաց զրուցաց* արժանի *(ՀՀ, 7(1), 529):* 15. *Եւ* էր *այնուհետեւ* տեսանել *յայտնի Աստուծոյ արդարաքնին հատուցումն (ՂՓ, 410):* 16. *Այրս այս Խաղ բուն* էր *սա* ի *Կարին* գաւառէ *(Բուզ., 166):*

Անվանական բաղադրյալ ստորոգյալով այլ օրինակներ ՝ 17. *Վասն որոյ [քահանայքն]* հոչակեալ անուանեցան *ի զօրագլխէն եւ յամենայն գաւառին* ՝ քաջք *եւ* զարմանալիք *(ՂՓ, 260):* 18. *Զի* հեշտընկալք *եւ* դիւրահասոյցք *տխմարագունիցն, եւ մարմնական իրօք զբաղելոցն* լինիցին *(Կոր., 32):*

6. ՍՏՈՐՈԳՅԱԼ ԿԱՄ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄ ԵՎ ԽՆԴԻՐ: *Ստորոգյալը, որ արտահայտվում է դիմավոր և անդեմ (անցյալ և անորոշ դերբայներ) բայերով, և բայական այլ անդամներ ընդմիջարկվում են իրենց խնդիրներից: Ընդ որում, զույգ միավորները կայուն շարադասություն չունեն և կարող են հանդես գալ փոխատեղությամբ՝ հետևառաջությամբ: Իսկ խնդիր լրացումների հարցում սահմանափակություն չկա. ընդմիջարկվում են ուղիղ և անուղղակի, բուն և կողմնակի խնդիրները:*

Օրինակ ՝ 1. *Զի առ յոժ ցանկականի մոլեգնութեանն,* ի բանսն *որ զնմանէ* ՝ *որպէս ի տեսութիւն շամբշութեամբ* վառեալ էր *(Խոր., 60):* 2. Զայս *եւ զայսպիսի, եւ որ ինչ այս բանից նման են բանք,* խօսեցաւ *(Բուզ., 392). այստեղ ընդմիջարկված են նաև որոշիչը եւ որոշյալը* ՝ զայսպիսի բանք: 3. *Եւ փչեաց շունչ կենդանի որպէս թէ բերանով. եւ* այնու, *զի առաւել պատուական ցուցանիցէ զնա,* յայտ առնէ *(Եզն., 128):* 4. *Եւ եթէ* գիտէ՝ *ասեն,* զվնասս՝ *որ գալոց են ի վերայ մարդկան, ընդէ՞ր ոչ արգելուցու (Եզն., 132):* 5. *Յղէր պնդէր, զի* ասպնջականութեան *ոք* արժանի մի ապասցէ *(Եղ., 190):* 6. Զոր *եւ* ոչ *զազանք եւ անասունք* ուտեն *(ՀՀ, 1, 670):* 7. *Եւ վաղվաղակի եւ փութով* զՆիխոր զՎշնասպդատ, *զայր հեզ եւ մտացի եւ աշխարհաշէն, բազում այլընտիր արամբք ի Հայս* արձակէին *(ՂՓ, 386):*

Հնարավոր է, որ նույն նախադասության մեջ ընդմիջարկվեն մեկից ավելի շարահյուսական կառույցներ, որի պարագայում նախադասության բովանդակային կողմը դժվարըմբռնելի է դառնում:

Օրինակ ՝ *Եւ իմ լուեալ զայս* ՝ *դողացեալ զարհուրիմ. քանզի* հայեցեալ ի *կամաւոր նոցա յաղագս յաւիտենից յուսոյն զանազան տանջանացն* մասունս*… չիշխեմ բնաւ եւ ոչ յիշել զտկարացեալ մասն ինչ յայնպիսեաց անձինս (ՂՓ, 260, 262). նախ* ՝ հայեցեալ *բայական անդամը (ժամանակի պարագա* ՝ *նայելով // երբ նայում եմ) և նրա հանգման խնդիրը* ՝ ի մասունս, *ընդմիջարկված են, ապա* ՝ *ընդմիջարկվել են նախդիրն ու նրա խնդիրը* ՝ ի մասունս, *և երրորդ* ՝ *ընդմիջարկված են նաև որոշիչն ու որոշյալը* ՝ կամաւոր տանջանացն *(տե՛ս կետ 1-ի 11-րդ օրինակը):*

Չի բացառվում, որ շարահյուսական մի կառույցի ընդմիջարկումը նպաստի մեկ այլ կառույցի բաղադրիչների ընդմիջարկմանը. սա ևս առաջ է բերում նախադասության կառուցվածքային առանձնահատկություններ:

Օրինակ՝ Դո՛ւ, որ յառաջ զանաւրէնութիւնսն գործէին հսկայս՝ *որ յանձանց զաւրութիւն եւ քաջութիւն յուսացեալ էին՝* ջնջեցեր, *ածե՛ր ի վերայ նոցա զանչափ ջուրցն սաստկութիւն (Գ Մակ., Բ, 2): Այստեղ ստորոգյալը և նրա ուղիղ խնդիրը* (ջնջեցեր հսկայս) *ընդմիջարկված են, իսկ* հսկայս *ուղիղ խնդրի, ինչպես նաև նրան վերաբերող երկրորդական նախադասության (=հսկաներին, որ* անօրինություններ էին գործում) *առաջադաս գործածությամբ ընդմիջարկվել են ենթական ու ստորոգյալները* (դու ջնջեցեր, ածեր):

7. ՍՏՈՐՈԳՅԱԼ ԿԱՄ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄ ԵՎ ՊԱՐԱԳԱ: *Հաճախ ծավալուն և բազմաբաղադրիչ ընդմիջարկությունների պատճառով լրացական կապակցությունները դժվարընկալելի են թվում:*

Օրինակ՝ 1. *Եւ* ի պատառուածս *նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն եւ ի գաղթականս փախստեամբ* ամրանան *(Խոր., 64):* 2. *Եւ* վաղվաղակի *եւ* փութով *զՆիխոր զՎշնասպդատ, զայր հեզ եւ զմտացի եւ աշխարհաշէն, բազում այլընտիր արամբք ի Հայս* արձակէին *(ՂՓ, 386). ընդմիջարկված են նաև ստորոգյալն ու նրա ուղիղ խնդիրը:* 3. *Եւ* այնպէս *ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ* տարեալ *եւ* պայծառացեալ՝ *ծանօթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան (Կոր., 10):*

8. ՆԱԽԴԻՐ ԵՎ ՆԱԽԴՐԻ ԽՆԴԻՐ: *Չափազանց տարածված երևույթ է, երբ նախդրավոր բառը, այլ կերպ՝ նախդրի խնդիրը, ունենում է լրացում կամ լրացումներ, նախդիրը տեղափոխվում է դրանց վրա: Այս հիմունքով, ինչպես նաև այդ խնդրին լրացնող կապակցությունների ծավալումով ձևավորվում են ընդմիջարկություններ նախդրի և նրա խնդրի միջև:*

Օրինակ՝ 1. *Քանզի հայեցեալ* ի *կամաւոր նոցա յաղագս յաւիտենից յուսոյն զանազան տանջանացն* մասունս *(ՂՓ, 260). հայեցեալ* ի մասունս *տանջանացն=նայելով տանջանքներին:* 2. *Եւ* ի *բազում անգամ երթեւեկութեան հրեշտակագնացութեանն* լինել, *եւ յոչ հաւանել Արային,* ի *սաստիկ* ցասման *լեալ Շամիրամայ (Խոր., 60):* 3. *Ապա ուրեմն յայտ է, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, եւ* յայսպիսիս *պատկանաւոր դնիլ* յարձանագրութիւնս *բանից (Խոր., 6).* ի *նախդիրը կրկնված է:* 4. *Փախչել նմա* ի *նախասացեալ լերինն* կողմանս *(ՀՀ, 7(1), 728):* 5. *Եւ* զ*մնացեալ դեռեւս ի տղայութեան հասակի* զորդիս *նահատակելոցն ընդ սրբոյն Վարդանայ… կանայք նահատակելոցն արանց եւ կապելոց… մանկանցն հոգացել լնուին (ՂՓ, 266).* զ *նախդիրը կրկնված է:* 6. *Վասն որոյ եւ* զբոլոր *իսկ* զՅոյնս *ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից (Խոր., 10).* զ *նախդիրը կրկնված է:* 7. *Ի ձեռն որոց եւ մեք յընթեռնուլն* զառ *ի նոցանէ* շարածս *բանից՝ ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք (Խոր., 10).* զ *նախդիրը* շարածս *խնդրից ընդմիջարկվել է* առ ի նոցանէ *կապակցությամբ, որից էլ առաջացել է նախդիրների կուտակում:* 8. *Եւ վասն* առ ի *Յունաց* զրուցաբանսն *զակնարկութիւն մերոյ պիտոյիցս առնելոյ՝ բաւական է այսչափ (Խոր., 10):* 9. *Զի թէպէտ եւ եմք ածու*

փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ *այլով յոլով անգամ նուաճեալ* թագւորութեամբ՝ *սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս (Խոր., 12):* 10. *Բայց* ընդ *քո յոյժ զարմացեալ եմ* ընդ *մտացդ* ծննդականութիւն *(Խոր., 12).* ընդ *նախդիրը կրկնված է:*

9. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ: *Գրաբարը հարուստ է նախադրություններով, որոնցից յուրաքանչյուրը, ի տարբերություն նախդիրների, ընդունում է մեկ հոլովով խնդիրներ: Նախադրությունների և դրանց խնդիրների միջև ընդմիջարկումները կատարվում են երեք ձևով՝ երեք առանձնահատկությամբ.*

ա) ընդմիջարկումը կատարվում է տարատեսակ կառույցներով ու կապակցություններով,

բ) նախադրությունն իր խնդրից ընդմիջարկվում է խնդրի նախադաս լրացումով,

գ) նախդրավոր կազմությամբ նախադրությունների բաղադրիչները ճեղքվում-բաժանվում են *նախադրության խնդրի լրացումով:*

Ա *կետին վերաբերող օրինակներ՝*

1. *Եւ* վասն *առ ի Յունաց զրուցաբանսն զակնարկութիւն մերոյ պիտոյիցս* առնելոյ *բաւական է այսչափ (Խոր., 10):* 2. *Առնոյր հրաման դահճապետն* վասն *սրբոյն Գայիանեայ* սպանման *(Ագաթ., 118):* 3. *Այլ* վասն *իմոյ ախտալից* մարմնոյս *ասասցից քեզ կարճառօտ (ՀՀ, 5(2), 494):* 4. Յաղագս *զամենայն հեթանոսսն* լնլոյ *որ ի նա հաւատոց՝ յարեաց (ՀՀ, 12, 313):* 5. Յաղագս *անսասանելի եւ անտարագրելի* հաւատոյս *նեղեցաք ի նախնումն… եւ հանապազ մեռանիմք* յաղագս *պատուական, սուրբ եւ անզուգական* անուանն *(ՀՀ, 12, 628):* 6. *Վասն այսորիկ ընդ անհնարին պատերազմ մարտնչին* ի մէջ *բարձրացելոց ջրեղէն* լերանց *եւ* ի մէջ *խոնարհելոց ծովային* ձորոցն *(Ագաթ., 8):* 7. *Ապա եթէ* յետ *այսր մեծի* վկայութեան *այլ ինչ հարցանես, աւասիկ կամք զբոլոր մարմինս տուեալ ի ձեռս քո (ՀՀ, 5(2), 228):* 8. *Ոչ փոքր ինչ արար նոցա ընդունելութիւն, մինչեւ* ի ձեռն *փոփոխ ընթացից գրով զգացուցեալ* կայսերն *(ՀՀ, 7(1), 772):* 9. *Որոց յանկարծակի* ի վերայ *անկեալ արեւելեայ եւ արեւմտեայ մեր* զօրուն*… ոչ ետուն ժամանել ճապաղել ի նետաձգութիւն (նույն տեղում, 819). այստեղ ընդմիջարկված են նաև ենթական ու ստորոգյալը* (որոց անկեալ): 10. *Եւ ոչ զորդին՝* առանց *զգազանսն ի ձեռն* առնլոյ *կարաց զնա ազատ առնել ի կասկածանաց (ՀՀ, 1, 68):* 11. *Չոգաւ* զկնի *խաբեբայ եւ մոլեկան* առնն *այնորիկ (ՀՀ, 12, 313):*

Բ *կետին վերաբերող օրինակներ՝*

1. *Թէպէտ եւ զինքեանս շարժունս տեսանիցեն* ի վերայ *հաղթ* ջուրցն *բազմութեան (Ագաթ., 6):* 2. *Երթեալ* զկնի *ամենակեցոյց* խաչելոյն՝ *հաճել զհրամանացն պայման,* զկնի *խաչակիր* գնդին *Քրիստոսի աշակերտելոցն հետեւեալ (Ագաթ., 480):* Զկնի *ոչ բազում* աւուրց *վախճանի Աւգոստոս (ՀՀ, 7(1), 630):* 3. Յաղագս *մոգաց* հանդերձապետին *(Բուզ., 244):* 4. Յաղագս *մեծի* Ծոփաց *(Բուզ., 324):* 5. Յաղագս *անմտութեան* կարծեաց *ընդանեացն Մուշեղի եւ այլ* մարդկան *(Բուզ., 362):*

Նախքան Գ *կետին վերաբերող օրինակներ վկայելը նշենք, որ նախադրություններից հետադրություններին անցնելու-վերածվելու պատմական զարգացումնե-*

րում կարևոր դեր են ունեցել այն ընդմիջարկումներն ու շարադասական փոփոխությունները, որոնք կապվում են նախդրավոր կազմությամբ նախադրությունների ու դրանց խնդիրների և առհասարակ գերադաս-ստորադաս կապակցությունների տեղաշարժ- տեղափոխությունների հետ (հմմտ. ի մէջ սկայիցն> հսկաների մեջ, ի վերայ թշնամեաց> թշնամիների վրա, ի ներքոյ երկնից> երկնքի ներքո || երկնքի տակ և այլն): Այդպիսի զարգացումներն աստիճանական փոփոխությունների արդյունք են, որոնց ընդհանուր պատկերը հետևյալն է. նախադրության բաղադրիչները (օր. ՝ ի *և* վերայ, ի *և* մէջ, զ *և* կնի) *ընդմիջարկվում են նախադրության խնդրով, որը նախադասվում է 2-րդ բաղադրիչին (օր.* ՝ *ի* բանիցն վերայ), *իսկ երբ տեղի է ունենում նախդիրների անկում, արդյունքում ձևավորվում են հետադաս կապն ու նրա խնդիրը (այսպիսով* ՝ ի վերայ բանիցն> ի բանիցն վերայ> բանիցն վերայ || վերա || վրա> խոսքերի վրա):

Ընդմիջարկումների ժամանակ կարող են կրկնվել նախդիրները կամ ձևավորվել զուգահեռ կազմություններ.

1. *Նստէր նա* ի *գրաստու* վերայ *(Բուզ., 406):* 2. *Այլ եւ վիճեալ եւս պնդին* ի *բանիցն* վերայ *(Եզն., 80):* 3. *Ոչ էիք հասեալ յիրաւի* ի *լաւութեանցն* վերայ *(ՀՀ, IV(1), 634):* 4. Յ*որոց* միջի *մարգարէքն իբրեւ լուսաւորք աստուածապայծառ պատգամօք ծագեցին (ՀՀ, IV(1), 594):* 5. Յ*որոց* միջի *յարոյց զԴաւիթ (ՀՀ, IV(1), 594):* 6. *Եդ զնա* ի *փորոնին* ներքոյ *սեանն (ՀՀ, 7(1), 781):* 7. *Պատգամաւորք սոցա մի* զ*միոյ* կնի *ընթանային զկնի նորա (Եսայի Հաս.-Ջալալ., 40):* 8. *Փոխ եւս* ի *պարտուցն* ի վերայ *առեալ (ՀՀ, IV(1), 634):* 9. *Այծից Հայոց արքայ, եկ նիստ* ի *խրձան խոտոյ* ի վերայ *(Բուզ., 196):* 10. *Ասէ ցնա յորժամ* ի *պարսիկ* ի *հողոյն* ի վերայ *ճեմէին (Բուզ., 406):* 11. *Տեսանոյր զամենեսեան* ի *նոյն* յ*առաջին բանին* վերայ *պնդեալ (ՀՀ, III(2), 136):* 12. *Ոչ թողին բնաւ քար* ի *քարի* վերայ *(ՀՀ, III(2), 136):*

Հոմանիշները ընդմիջարկվում են խնդրից ՝ Զկնի յետ *բազում* ժամանակաց *յայտնեցաւ (ՀՀ, 7(1), 630):*

10. ԺԽՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ: *Բայի ժխտական ձևեր են կազմվում* մի *արգելական և* ոչ, չ, չեւ *ժխտական մասնիկներով, որոնցից* մի, ոչ, չեւ *մասնիկները համապատասխան ձևերից (բաղադրիչներից) ընդմիջարկվում են, իսկ* չ *ժխտականը, կից և սերտ լինելով, չի ընդմիջարկվում:*

Ա) Մի *արգելականը հաճախ բաղադրվող ձևից ընդմիջարկվում է ծավալուն ընդմիջարկություններով, ինչպես* ՝

1. Մի՛ *յայսպիսի աստուածապաշտ եւ աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ չարի կամացն ի ծառայութիւն* արկցէ *(ՀՀ, III(2), 520):* 2. *Զի* մի՛ *զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ* համարիցին *(ՀՀ, III(2), 520):* 3. *Զի* մի՛ *ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն* պղծեսցի *(Բուզ., 30):* 4. Մի՛ *թշուառական աշխարհս Հայոց յաղագս քո* կորիցէ *(Բուզ., 174):* 5. Մի՛ *յանկարգ իբրեւ հեթանոս կոծ կամ աշխարանս ոք անյուսութեամբ* դնիցէ *ինձ (ՀՀ, III(2), 522):* 6. Մի՛ *տեարք իմ պատուականք, յետ այսչափ ի բարձունս վերանալոյ* ՝ *այսրէն յերկիր անկեալ* թաւալիցիմք *(ՀՀ, 5(2), 229):*

Մի *արգելականն ընդմիջարկվում է նաև անդեմ ձևերից՝* 7. Մի՛ *անարժանս աւելի տարապայմանս հարկօք* նեղել *քան զչափն (ՀՀ, III(2), 520):* 8. *Մի՛ որսացուք զառատ ինչ որսոց ի տեղիս, եւ զի* մի՛ *մեծ ինչ նախճիրս որսոց* կոտորեալ *առ ի ցոյց առնելոյ (ՀՀ, III(2), 520):* 9. Մի՛ *բնաւ* ելանել *ըստ իւրաքանչիւր դուրս (ՀՀ, III(2), 520):*

Բ) Ոչ *ժխտականը, համապատասխան բաղադրիչից ընդմիջարկվելով, կարող է գործածվել նախադաս թե հետադաս շարադասությամբ, ինչպես՝*

1. *Զայնու ժամանակաւ Արշակ արքայ Հայոց* ոչ *ինչ կարի ի ճանապարհ Աստուծոյ* գնացեալ լինէր *(Բուզ., 168):* 2. *Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. եւ* ոչ *ինչ առանց այնորիկ, որ թողն զիս հայրն,* ունիմ *իշխանութիւն* գործել *ինչ (Բուզ., 170):* 3. Կամիմ *զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն* ոչ *առանց յիշատակի բամբասանաց* թողուլ *(Խոր., 10):* 4. *Յաղագս զի* ոչ *սակս Ադամայ եւ այլոց նահապետացն* միաբանեցան *այլքն ի պատմագրաց (Խոր., 14):* 5. *Զոր եւ* ոչ *զգազանք եւ անասունք* ուտեն *(ՀՀ, 1, 670):* 6. *Եւ* ոչ *ուխտաւորութիւնն նոցա յուխտաւորութիւն* համարէր *(ՀՀ, 1, 671):* 7. Ոչ *տղայոյ ոք հաստատուն կերակուր* տայ, *եւ* ոչ *մեծամեծ խորհուրդս* յայտնէ, *եւ* ոչ *աւագ բանս* խօսի *(ՀՀ, 1, 667):* 8. Գիտէր *իսկ* ոչ՝ *թէ բնաւ իցէ Աստուած (ՀՀ, 1, 668):* 9. *Այլ զի* ոչ *ինչ* արար, *յայտ է՝ թէ բնաւ եւ* էր *իսկ* ոչ *(ՀՀ, 1, 668):*

Գ) Չեւ *ժխտականը հաճախական գործածություն չունի, հանդիպում է համապատասխան բայաձևերից ընդմիջարկված, ինչպես՝*

1. *Ապա էր երբէք զի չէր իսկ հիւղն մինչ* չեւ *պարզականացն ի միմեանս* յարեալ էր *(ՀՀ, 1, 740):* 2. *Վասն այնորիկ մինչ չեւ ծնեալ էին մինչ* չեւ *մի ինչ բարի կամ չար* գործեալ էին *(ՀՀ, 1, 740):* 3. *Բնաւ չէր ամենեւին ինչ արարիչ բովանդակ, մինչ* չեւ *Աստուծոյ զմարդն* արարեալ էր *(ՀՀ, 1, 740):*

11. ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ: *Բայական հարադրական բարդության բաղադրիչները կարող են ընդմիջարկվել: Այդպիսիք հազվադեպ են, ինչպես՝* 1. Ընդոստ *ի քնոյ* լինելով *(ՆՀԲ, Ա, 773):* 2. Փոխ *եւս ի պարտուցն ի վերայ* առեալ *(ՀՀ, IV(1), 634):*

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրակացնել.

1. Ընդմիջարկությունները չուսումնասիրված կառույցներ կամ միավորներ են, որոնց քննությունն անհրաժեշտ է նախադասության (նաև խոսքի) բովանդակությունը ստույգ ըմբռնելու և հասկանալու համար:

2. Ընդմիջարկվող շարահյուսական կառույցները բաղկացած են քերականորեն կապակցված կայուն միավորներից, իսկ ընդմիջարկությունները թե՛ կառուցվածքով և թե՛ բովանդակությամբ բազմազան են՝

ա) կարող են լինել կապակցված կամ անկապ կառույցներ,

բ) բովանդակության առումով կարող են լրացնել ընդմիջարկվող միավորներին ու պարզաբանել դրանց իմաստային հարաբերությունները, մյուս կողմից հնարավոր է՝ անկախ, քերականական կապերից զերծ կառույցներ, բառեր դիտվեն, որոնք, սակայն, իմաստի սաստկացման, երկբայության, անհրաժեշտության և այլ նրբերանգներ կարտահայտեն:

3. Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն նախադասությունները, որոնցում կան մեկից ավելի ընդմիջարկություններ, որոնց բացահայտման դեպքում է միայն հնարավոր ճշմարիտ գնահատականներ տալ դրանց կառուցվածքին ու բովանդակությանը:

4. Ընդմիջարկություններն առավելապես լեզվի շարահյուսական կառուցվածքին առնչվող կառույցներ են, որոնց՝ խոսքի մեջ ձևավորման և գործածության հիմքում ընկած են հեղինակային ոճի ու անհատականության ամենազոր կարողությունը, միջամտությունը և ազդեցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.– Ագաթանգեղոս. Հայոց պատմություն, Երևան, 1983:

Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց, Հայաստանի Աստվածաշնչյան ընկերություն, 1997 (համառոտությունները՝ ընդունված կարգով):

Բուզ.– Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, Երևան, 1987:

Եզն.– Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Երևան, 1994:

Եղ.– Եղիշե. Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:

Եսայի Հաս.-Ջալալ.– Եսայի Հասան-Ջալալյան. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1865:

Խոր.– Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981:

Կոր.– Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիզ, 1913:

ՀՀ– Հայկական համաբարբառ (1-12՝ Եզնիկ, Ագաթանգեղոս, Բուզանդ, Փարպեցի, Եղիշե, Խորենացի, Ղևոնդ, Նարեկացի):

ՂՓ– Ղազար Փարպեցի. Հայոց պատմություն, Երևան, 1982:

ՆՀԲ– Նոր բառգիրք հայկազեան լեզուի՝ 2 հատորով, Երևան, 1979 և 1981:

ВСТАВКИ КАК РАЗДЕЛЯЮЩИЕ КОНСТРУКЦИИ ГРАММАТИЧЕСКИХ СОЧЕТАНИЙ В ГРАБАРЕ

ЭДУАРД МКРТЧЯН

Р е з ю м е

В грамматических сочетаниях разные по конструкции и характеру вставки делают речь более понятной и доступной. В этом плане особый интерес представляют предложения, в которых наличествует более, чем одна конструкция со вставками. Особого внимания заслуживают вставки, на основе которых наблюдаются исторические переходы предлогов в послелог [пример: ի վերայ *բանիցն* > ի *բանիցն* վերայ *(> վերա > վրա) > բանիցն վրա = խոսքերի վրա].*